# ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

## ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱ-ԹԱՏՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Հայաստանում սովետական կարգերի գոյության քառասուն տարիները հանդիսացան հայ ժողովրդի ոչ միայն տնտեսական վերելքի, այլև կուլտուրայի՝ հատկապես թատերական արվեստի և կերպարվեստի ծաղկման ու զարգացման տարիներ։ Սովետահայ թատրոնը և կերպարվեստը անցած քառասուն տարիների ընթացքում հսկայական դեր կատարեցին աշխատավորության գեղարվեստական դաստիարակության պատվավոր գործում։ Նշանակալից ուղի է անցել սովետահայ թատրոնը, որն իր ստեղծագործական հաջողություններով ճանաչված է մեր ռեսպուբլիկայի սահմաններից դուրս։ Վ. Փափազյանը, Հասմիկը, Ա. Ոսկանյանը, Օ. Գուլազյանը, Վ. Վաղարշյանը, Հ. Ներսիսյանը, Ա. Ավետիսյանը, Գ. Ջանիբեկյանը, որոնք ստեղծագործական հասակ են առել սովետահայ թատրոնում, իրենց կատարողական արվեստով վաստակել են Սովետական Միության թատերասեր լայն հասարակայնության հիացմունքն ու սերը։

Սովետահայ կերպարվեստի ավագ սերնդի ներկայացուցիչների՝ Ստ. Աղաջանյանի, Փ. Թերլեմեզյանի, Եղ. Թադևոսյանի, Մ. Սարյանի, Հ. Կոջոյանի, Գ. Գյուրջյանի, Ա. Սարգսյանի, Ս. Ստեփանյանի ստեղծագործությունները իրենց արժանի տեղն են գտել միութենական ցուցահանդեսներում։

Սակայն կուլտուրական ռևոլյուցիայի վերելքի պայմաններում թատերական արվեստի, ինչպես և կերպարվեստի զարգացումը չէր կարող սահմանափակվել Սունդուկյանի անվան թատրոնի շուրջը համախմբված ականավոր վարպետների գործունեությամբ և կերպարվեստի ասպարեզում ստեղծագործող մի խումբ արվեստագետներով։ Աշխատավորական լայն խավերի գեղարվեստական դաստիարակության խնդիրը պահանջում էր ընդարձակել թատրոնների ցանցը և դաստիարակել շնորհունակ կերպարվեստագետների հերթափոխ սերունդ։

Թատերական կադրերի ստեղծման անհրաժեշտությունը առաջ էր քաշված դեռ նախառևոլյուցիոն շրջանում։ Հայ ականավոր դերասան, ռեժիսյոր Օվի Սևումյանը՝ ելնելով երիտասարդության թատերական կրթության հրատապ պահանջից, 1919 թվականի հուլիսի 30-ին դաշնակցական կառավարությանը ներկայացրած իր զեկուցագրի մեջ խոսելով թատերական գործում տիրող անմխիթար վիճակի մասին, դրտնում էր, որ «առանց թատերական երիտասարդության կրթության գործի կազմակերպման, թատրոնը չի կարող հեռանկար ունենալ»։ Նույն թվականին դերասան Վարդան Միրզոյանը ևս դաշնակցական կառավարության դռները ապարդյուն մաշելուց հետո սեփական նախաձեռնությամբ կազմակերպում է թատերական ստուդիա, նպատակ ունենալով հայ թատրոնի համար պատրաստել երիտասարդ դերասաններ և դերասանուհիներ։ Այդ փորձերը և ձեռնարկումները վկայում են այն մասին, որ նախասովետական շրջանում արդեն կար այն խոր համոզումը, որ առանց դերասանական կադրերի պատրաստման և թատերական մասնագիտական կրթության, թատրոնը չի կարող զարգացման հեռանկար ունենալ։ Դերասան Վ. Միրզոյանը իր «Դրամատիկական դասընթացների ծրագրի» մեջ գրում էր. «Հայ թատրոնի միակ ելքն է՝ ունենալ կրթված, և ապա բնական արվեստը օրինավոր յուրացրած դերասան-դերասանուհիներ։ Առանց դրանց մեր թատրոնը չի կարող առաջադիմել։ Մենք կոչ ենք անում հայ մտավորականներին, գեղարվեստագետներին և թատերասեր երիտասարդությանը աջակցություն ցույց տալ այդ նոր ձեռնարկությանը»։ Բայց դաշնակցական կառավարությունը անտարբեր մնաց։

Սովետական Հայաստանի կառավարությունը իր գոյության առաջին իսկ ամիսներից ձեռնամուխ եղավ թատերական կրթության կազմակերպման գործին։ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց երկու ամիս անց Երևանից Գավհեղկոմը դերասան Վ. Միրզոյանին ուղղված մի գրության մեջ հայտնում է հետևյալը։

«Երևանի դրամատիկական ստուդիայի վարիչ Վարդան Միրզոյանին։

Լուսժողկոմատի կարգադրությամբ հայտնում ենք ի կարգադրություն, որ Ձեր ղեկավարության ներքո գտնվող դրամատիկական ստուդիան առաջիկա թվի հունվարի 1-ից պետականացվում է որպես Երևանի դրամատիկական ստուդիա և դրվում է Երևանի գավառական հեղկոմի իրավասության ներքո։ Առաջարկում ենք դրամատիկական ստուդիայի գույքն ու գործերը հանձնել Երևանի գավառական հեղկոմի կրթական բաժանմունքին և այդ մասին հայտնել մեզ ի գիտություն։

Արվեստի բաժնի վարիչ
Եղիշե Չարենց»։

Սովետական կառավարության հոգատարության շնորհիվ Վարդան Միրզոյանի դրամատիկական ստուդիան պետականացվում է և, այսպիսով, դառնում է թատերական կրթության առաջին դարբնոցը։ Այստեղ են իրենց թատերական կրթությունը ստացել Վ. Աճեմյանը, Գ. Ջանիբեկյանը, Հ. Ավագյանը, Օ. Բուխսիյանը, Գ. Գաբրիելյանը և շատ ուրիշներ։ Հայաստանում թատերական կրթության առաջին էտապը ընդգրկում է 1920—1928 թվականները, երբ հայ թատրոնի երիտասարդությունը մասնագիտական կրթություն ստանալու նպատակով մեկնում է Մոսկվա, մանկավարժ-ռեժիսորների ձեռքի տակ ուսանելու։ Համար։ Ուսման կենտրոնը դառնում է Մոսկվայի Հայկական կուլտուրայի տան կից կազմակերպված հայկական թատերական ստուդիան, որի շրջանավարտները համալրում են Հայաստանի թատերական արվեստի բնագավառը։ Այնտեղ ուսանել և իրենց բախտը թատրոնի հետ են կապել Ա. Գուլակյանը, Վ. Վարդանյանը, Մ. Կոստանյանը, Ի. Սարյանը, Տ. Շամիրխանյանը և շատ ուրիշներ։

Թատերական կրթության երկրորդ շրջանը ընդգրկում է 1928—1935 թվականները, երբ Մոսկվայի Հայկական թատերական ստուդիայում կրթություն ստացած կադրերը վերադառնում են Հայաստան և ձեռնամուխ լինում թատերական կրթության գործի կազմակերպմանը։ Նրանց ջանքերով ստուդիաներ են ստեղծվում թե՛ Երևանի Սունդուկյանի անվան, այնպես էլ Լենինականի Մռավյանի անվան թատրոններին կից։ Այդ ստուդիաներում մասնագիտական ուսուցումը սերտորեն շաղկապվում է թատրոնի արտադրական-ռեպերտուարային պլանի հետ։

Երրորդ շրջանը, որն ընդգրկում է 1935—1944 թվականները, կարելի է համարել թատերական կրթության դպրոցական ուսուցման շրջան, երբ թատերական կադրերի պատրաստման գործը առանձնացվում է թատրոններից և կազմակերպվում է ռեսպուբլիկական թատերական ուսումնարան, որի շրջանավարտները պետք է ապահովեին շրջանային թատրոնների լայն ցանցը։ Կրթության հիմքում դրված էր ոչ միայն մասնագիտական, այլև հանրակրթական առարկաների ուսուցումը միջնակարգ դպրոցի ծրագրի ծավալով, որով սաներին հնարավորություն էր տրվում ցանկության դեպքում ձեռք բերել նաև բարձրագույն կրթություն։

Վերջապես, չորրորդ շրջանը, որն ընդգրկում է 1944 թվականից մինչև մեր օրերը, կարելի է համարել թատերական կադրերի պատրաստման բուհական ուսումնառության շրջան։

ՍՍՀՄ Մինիստրների Սովետի 1944 թ. հուլիսի 5-ի որոշմամբ, Երևանի թատերական ուսումնարանի բազայի վրա կազմակերպվում է Թատերական ինստիտուտ՝ դերասանական, ռեժիսորական և թատերագիտական ֆակուլտետներով, իսկ 1945 թ. բացվում է նաև Գեղարվեստական ինստիտուտ գունանկարչական և քանդակագործական ֆակուլտետներով, որը ուներ գրաֆիկական և թատերական ձևավորման բաժիններ։ Այս երկու բուհերը, որպես առանձին գործող ուսումնական օջախներ, յոթ-ութ տարվա ընթացքում մեր ռեսպուբլիկային տվեցին արվեստի բարձրորակ կադրեր, ինչպես թատերական, այնպես էլ կերպարվեստի բնագավառի համար։

1953 թ. անհրաժեշտություն ստեղծվեց միավորել արվեստի երկու բուհերը և ստեղծել Գեղարվեստա-թատերական ինստիտուտ՝ թատերական, գունանկարչական և քանդակագործական ֆակուլտետներով։

Իր գոյության տասնվեց տարիների ընթացքում նախկին Թատերական ինստիտուտը, իսկ ներկայումս գործող թատերական ֆակուլտետը մեր ռեսպուբլիկայի թատրոններին տվեց զգալի թվով դերասաններ, ռեժիսորներ ու թատերագետներ։ Դերասանական ֆակուլտետը 1944—1960 թթ. ժամանակամիջոցում ավարտել են 175 դերասաններ, որոնց մեծ մասը աշխատում է Երևանի, Լենինականի, Կիրովականի, Արտաշատի, Ղափանի, Գորիսի, Կամոյի, ինչպես նաև Թբիլիսիի ու Ստեփանակերտի հայկական թատրոններում։ Կան թատրոններ (ինչպես, օրինակ, Պատանի հանդիսատեսի և Ղափանի թատրոնները), որոնց ստեղծագործական կազմը կոմպլեկտավորված է ինստիտուտի շրջանավարտներով։ Բավական է հիշատակել, որ Սունդուկյանի անվան թատրոնում են աշխատում ինստիտուտի շրջանավարտներից 32 հոգի, Երաժշտական կոմեդիայի թատրոնում՝ 7, Պատանի հանդիսատեսի թատրոնում՝ 16, ռուսական

թատրոնում 7 հոգի և այլն։ Դերասանական կադրերը հաջողությամբ աշխատում են Ռադիոկոմիտեում, Հայֆիլմ կինոստուդիայում, Հայֆիլհարմոնիայում և այլն։ Երիտասարդ դերասաններն իրենց խոստումնալից արվեստով արժանացել են թատերական հասարակայնության ջերմ խրախուսանքին։ Իրենց ուսանողական ստեղծագործական ուղին չբոլորած մի քանի շրջանավարտներ նույնիսկ արժանացել են ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստի կոչման։



Բեմանկարչական ֆակուլտետի շրջանավարտները պետական քննական հանձնաժողովի հետ

Թատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը 1944—1953 թթ. ընթացքում ավարտել են 44 հոգի, որոնք աշխատում են մայրաքաղաքի և շրջանային թատրոններում։ Շրջանավարտ ռեժիսորները աշխատում են Հեռուստատեսության ստուդիայում, Հայֆիլմ կինոստուդիայում, ինչպես և կուլտուրայի ղեկավար օրգաններում։ 1958 թ. սկսած ինստիտուտը վերսկսել է ռեժիսորական կադրերի պատրաստման գործը և 1962 թ. կտա իր շրջանավարտները։ Ինստիտուտի թատերագիտական ֆակուլտետը 1944—1952 թթ. տվել է 59 շրջանավարտ թատերագետներ։ Երիտասարդ թատերագետները հաջողությամբ աշխատում են կուլտուրայի ասպարեզում, Գիտությունների ակադեմիայում, ռեսպուբլիկական և շրջանային թերթերում, Պետհրատում և այլն։ Մի քանի երիտասարդ թատերագետներ հանդես են եկել տպագիր աշխատություններով, որոնք նվիրված են թատերական արվեստի և դրամատուրգիայի հարցերին։ Լ. Հախվերդյանի «Մեր օրերի դրամատուրգիան», Ս. Ռիզաևի «Մաքսիմ Գորկու դրամատուրգիան հայ բեմում», Բ. Հարությունյանի «Ռուս դրամատուրգիան հայ բեմում», Լ. Խալաթյանի «Մ. Սվաղչյան», «Սարյանը և թատրոնը», Խ. Սամվելյանի «Րաֆֆի» մենագրությունը — ահա այն համեստ ավանդը, որ ներդրել են երիտասարդ թատերագետները վերջին մի քանի տարիների ընթացքում։ Թատերագետներից հինգ հոգի արվեստագիտության թեկնածուներ են։ Իդեոլոգիական ֆրոնտի տարբեր բնագավառներում աշխատող երիտասարդ թատերագետներ Լ. Սամվելյանը, Ա. Ռենանյանը, Հ. Դալայանը, Գ. Զարեյանը, Վ. Հակոբջանյանը, Տ. Կարապետյանը, Դ. Հովհաննիսյանը, Ա. Բարայանը, Խ. Ավագյանը, Վ. Օսիպովան, Վ. Գրիգորյանը, Ռ. Մաղոյանը մշտապես հանդես են գալիս թատերագիտական ուշագրավ հոդվածներով և իրենց ուժերը ներածին չափով օգնում են սովետահայ թատրոնի զարգացմանը։

* * *

Արվեստի կադրերի պատրաստման գործում ռեսպուբլիկան զգալի նվաճումների է հասել նաև կերպարվեստի բնագավառում։ 1922 թ. Երևանում, առաջին անգամ հայ իրականության մեջ, բացվում է Կերպարվեստի ուսումնարանը, տիտուտը, այնտեղ գործող նկարչական և քանդակագործական ֆակուլտետներով, մինչև օրս կերպարվեստի բնագավառի համար պատրաստել են մեծ թվով մասնագետներ։ Ելնելով ժողովրդական տնտեսության պահանջներից, ինստիտուտն այժմ կադրեր է պատրաստում նաև



Թատերական ֆակուլտետի շրջանավարտները պետական բննական հանձնաժողովի հետ

որը իր գոյության 38 տարիների ընթացքում տվել է հարյուրավոր նկարիչներ և քանդակագործներ։ Անվանի կերպարվեստագետներ Աղաջանյանը, Թադևոսյանը, Առաքելյանը, Գայֆեջյանը, Ախիկյանը, որոնք այդ ուսումնարանի լավագույն մանկավարժների առաջին սերունդն են հանդիսացել, կրթել են շնորհալի նկարիչների և քանդակագործների մի քանի սերունդ։ Առաջին տարիների ընթացքում Կերպարվեստի ուսումնարանն ավարտած երիտասարդ արվեստագետներից շատերը միայն հնարավորություն ունեցան շարունակել իրենց կրթությունը Մոսկվայի և Լենինգրադի բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Այդ է պատճառը, որ աճող սերնդի պահանջները ստիպում էին մտածել ռեսպուբլիկայում բարձրագույն ուսումնական հաստատություն ստեղծելու մասին։

1945 թ. Երևանում բացվում է Գեղարվեստական ինստիտուտ, գունանկարչական և քանդակագործական ֆակուլտետներով։ Այդ ինստիտուտը իր գոյության յոթ տարիների ընթացքում և ապա Գեղարվեստա-թատերական ինստիտուտը պետական գծով, ինչպես և նկարիչ մանկավարժներ՝ դպրոցական ցանցի համար։ 15 տարվա ընթացքում ինստիտուտը տվել է 56 գեղանկարիչ, 38 քանդակագործ, 39 գրաֆիկ և 28 թատերական նկարիչ։ Ինստիտուտի շրջանավարտների զգալի մասը իրենց գունանկարչական, քանդակագործական, գրաֆիկական աշխատանքներով հանդես են եկել հանրապետական և համամիութենական ցուցահանդեսներում։ Ինստիտուտն ավարտած կերպարվեստագետներից Գ. Խանջյանը, Ղ. Չուբարյանը, Շ. Հերթեցյանը, Ա. Պապյանը, Մ. Հովսեփյանը, Վ. Խուրենյանը, Մ. Սոսոյանը, Ս. Մուրադյանը հաջողությամբ հանդես են եկել համամիութենական ցուցահանդեսներում և փեստիվալներում։ Ինստիտուտի 197 շրջանավարտներից 85-ը նկարիչների միության անդամ են, որը վկայում է նրանց ստեղծագործական հասունության մասին, մոտ 60 հոգի աշխատում են որպես նկարիչներ Պետհրատում, թատրոններում, մանկավարժական ասպարեզում և արտադրական ձեռնարկություններում։

Ինստիտուտի յոթ ամբիոններում միավորված դասախոսական կազմը, որի մեծ մասը աշխատում է ինստիտուտի հիմնադրման օրից, հսկայական աշխատանք է կատարել երիտասարդ արվեստագետների գաղափարական դաստիարակության և մասնագիտական ուսուցման բնագավառում։ Երախտագիտության խոր զգացումով պետք է հիշել պրոֆեսորներ Լ. Քալանթարի, Վ. Վաղարշյանի, Ա. Գուլակյանի, Հ. Կոչոյանի, ինչպես և դոցենտներ Ռ. Վարդանյանի, Տ. Ճամիրխանյանի, Գ. Գաբրիելյանի, Ա. Ղարիբյանի ավանդը թատերական և կերպարվեստի կադրերի ստեղծման գործում։ Ինստիտուտի բոլոր շրջանավարտները ակնածանքով և սիրով են հիշում ակադեմիկոս Գ. Ղափանցյանին, պրոֆեսորներ Հ. Դյուլիքեխյանին, Գ. Լևոնյանին, Ն. Դուրագյանին, դոցենտ Ռ. Վարդազարյանին։ Ինստիտուտի կադրերի պատրաստման գործում մեծ եռանդով շարունակում են աշխատել պրոֆեսորներ Ա. Սարգսյանը, Ս. Ստեփանյանը, Վ. Վարդանյանը, դոցենտներ Վ. Աճեմյանը, Ս. Քոչարյանը, Մ. Կոստանյանը, Է. Իսաբեկյանը, Ա. Նալբանդյանը, Բ. Քոլոզյանը, Կ. Մեծատուրյանը, Գ. Ահարոնյանը, Ս. Լիսիցյանը, Ջ. Մուրադյանը և շատ ուրիշներ։

Երիտասարդ դերասանների դաստիարակության գործը կառուցելով ռուս, եվրոպական և ազգային դրամատուրգիայի լավագույն ստեղծագործությունների վրա, վերը նշված մասնագետների ջանքերով ինստիտուտը տվել է մի շարք ներկայացումներ, որոնք արժանացել են ոչ միայն ռեսպուբլիկայի թատերական հասարակայնության ուշադրությանը, այլև Մոսկվայի թատերասերների հավանությանը։ 1958 թ. Մոսկվայում տեղի ունեցավ թատերական ինստիտուտների համամիութենական ստուգատես, որտեղ Երևանի Գեղարվեստա-թատերական ինստիտուտը իր «Կոակ» և «Չար ոգի» բեմադրություններով գրավեց առաջին տեղը։

Վերջին տարիների շրջանավարտներից իրենց դիպլոմային աշխատանքների հաջող կատարմամբ հիշատակության արժանի են գեղանկարիչներ Վահան Խորենյանը, որի «Կարմիր բանակի մուտքը Հայաստան» մեծադիր կոմպոզիցիոն կտավը ջերմ ընդունելություն գտավ գեղարվեստական հասարակայնության կողմից։ Այդ նկարի ավելի մշակված տարբերակը հաջողությամբ ցուցադրվեց ռեսպուբլիկական ցուցահանդեսում։ Ռաֆայել Աթայանի «Կոլխոզի կալում» նկարը, որը դիպլոմային աշխատանքների համամիութենական ցուցահանդեսում նշվեց իբրև հաջողված աշխատանք, գունավոր վերարտադրությամբ տպագրվեց կենտրոնական ամսագրերում։ Այդ նկարը հմայում է դիտողին իր լիրիկական շնչով և գեղանկարչական նուրբ կառուցվածքով։ Քանդակագործական ֆակուլտետի շրջանավարտներից կուզենայինք նշել Արայիկ Հարությունյանին, որի «Կոմիտաս» մարմարյա աշխատանքը վկայում է նրա պրոֆեսիոնալ հասունության և արվեստագետի՝ դեպի իր ընտրած թեման հանդես բերած ջերմության մասին։ Պակաս հաջողությամբ հանդես չեկավ նաև երիտասարդ քանդակագործ Կարապետ Ճիրինյանը, որի «Հաղթողը» մարմարյա կիսանդրին պատկերում է աշխարհի չեմպիոն մարմնամարզիկ Ազարյանին։ Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում քանդակագործ Հարություն Զարմարչյանի «Վահագն Վիշապաքաղ» խմբաքանդակը, որը կատարված է դեկորատիվ պլանով և մոնումենտալ արձանագործության հատուկ բնորոշ ընդհանրացումներով։ Գրաֆիկական բաժնի ուսանողների դիպլոմային աշխատանքներից կարելի է նշել Գևորգ Ավագյանի «Ս. Սպանդարյանի կյանքից» գրաֆիկական սերիան և Լիդա Խանամիրյանի Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթի գեղարվեստական ձևավորումը։ Թատերական ձևավորման բաժինը նույնպես տվել է մի շարք շնորհալի նկարիչներ, որոնք հաջողությամբ աշխատում են թատրոնի ասպարեզում։ Այսպես, Կառլեն Կուրղինյանը, իբրև դիպլոմային աշխատանք, Պատանի հանդիսատեսի թատրոնում ձևավորել էր «Մայրը» պիեսը։ Զարզանդ Հարությունյանի «Արա Գեղեցիկ» պիեսի ձևավորումը աչքի էր ընկնում իր գունային գամմայի գեղեցկությամբ և ոճի ճիշտ ըմբռնմամբ։ Հետաքրքիր էր նաև Մայիս Սարգսյանի «Աիդա» օպերայի ձևավորումը, որտեղ հեղինակը ցուցաբերել էր ինքնատիպ մոտեցում և կատարման վարպետություն։

Ինստիտուտը ունի բոլոր անհրաժեշտ պայմանները արվեստի բարձրորակ կադրեր պատրաստելու համար։ Բավական է նշել, որ 1958 թ. ինստիտուտի հիմնական շենքին կից կառուցվեց հատուկ ուսումնական կորպուս նկարչական և քանդակագործական ֆակուլտետների համար։ Ինստիտուտը ունի հարուստ գրադարան, շուրջ 30 հազար մասնագիտական գրականությամբ, ինչպես և մարքսիզմ-լենինիզմի, արվեստի պատմության, գրիմի կաբինետներ։ Ինստիտուտը ունի նաև հատուկ թատերասրահ, բեմական անհրաժեշտ սարքավորումով, որտեղ սիստեմատիկ կերպով ներկայացումներ են կազմակերպվում։ Ուսանողության 78 տոկոսը ապահովվում է թոշակով։ Գերազանցիկ ուսանողները ստանում են Վ. Ի. Լենինի, Վ. Վաղարշյանի, Համիկի, Հ. Կոչոյանի անվան բարձր թոշակներ։ Առանձին հոգատարությամբ են շրջապատված մեզ

մոտ սովորող սփյուռքահայ երիտասարդները, որոնք ստանում են ամենաբարձր թոշակը։

Ինստիտուտը ուսանողներին անվճար տրամադրում է ներկեր, կտավ, ինչպես և ապահովում է բոլոր ներկայացումները անհրաժեշտ նյութերով։ Բավական է նշել, որ ավարտական կուրսերի բոլոր ուսանողներին հնարավորություն է տրվում մեկ ամսով լինել Մոսկվայում, Լենինգրադում, Ռիգայում, որտեղ նրանք անց են կացնում իրենց ստեղծագործական պրակտիկան։

Գեղարվեստա-թատերական ինստիտուտը ունի կադրերի պատրաստման մեծ և պատասխանատու ծրագիր։ Այս ուսումնական տարվանից սիստեմատիկ կերպով պատրաստվելու են ռեժիսյորական կադրեր։ Պատրաստվելու են նաև մասնագետներ գորգագործական, կերամիկական և մանվածքային արդյունաբերության համար։ Ուսուցումը կյանքի և արտադրության հետ շաղկապելու նշանաբանով Գեղարվեստա-թատերական ինստիտուտը բոլոր հնարավորությունները կօգտագործի ապահովելու արվեստի լիարժեք կադրերի պատրաստման գործը։

Ս. ԴԱՆԻԵԼՅԱՆ

## ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՆ

Հայկական երաժշտական կուլտուրան երբեք չի ապրել ծաղկման ու զարգացման այնպիսի բուռն շրջան, որպիսին ապրել է Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո։ Անցած քառասուն տարիների ընթացքում սովետահայ երաժշտությունը հասել է այնպիսի բարձունքների, որ իրավամբ իր աչքի ընկնող տեղն է գրավել թե մեր Սովետական մեծ Հայրենիքի եղբայրական ռեսպուբլիկաների երաժշտական կուլտուրաների շարքում և թե համաշխարհային երաժշտության մեջ։

Սովետահայ երաժշտական կուլտուրայի այդ հսկայական վերելքը անհնարին է պատկերացնել առանց Երևանի Պետական կոնսերվատորիայի գոյության, որը 1946 թ. կրում է հանճարեղ Կոմիտասի անունը։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց մի քանի ամիս հետո, կառավարության հատուկ որոշմամբ Երևանում կազմակերպվեց երաժշտական ստուդիա, որը հայ երաժշտության պատմության մեջ առաջին երաժշտական ուսումնական հաստատությունն էր։

Հայտնի է, որ հայ մտավորականությունը, այդ թվում և փոքրաթիվ հայ պրոֆեսիոնալ երաժիշտները, ռեվոլյուցիայից առաջ մեծ մասամբ ապրում և գործում էին Հայաստանի սահմաններից դուրս Հայաստանում գործունեության ասպարեզ չգտնելու պատճառով։ Երաժշտական ստուդիայի կազմակերպումը մի շարք հայ երաժիշտների համար Երևան տեղափոխվելու խթան հանդիսացավ։ Ականավոր հայ կոմպոզիտոր, տաղանդավոր խմբավար, խոշոր երաժշտական-հասարակական գործիչ և մանկավարժ Ռոմանոս Մելիքյանի գլխավորությամբ նրանք իրենց վրա վերցրին Հայաստանում պրոֆեսիոնալ երաժշտական կուլտուրայի պատրաստման ու տարածման բարձր ու ազնիվ միսիան։ Դրանց թվում էին Արուս Բաբայանը (մեներգեցողության դասատու), Աննա Մնացականյանը և Հովսեփ Մաղաքյանը (մասնագիտական դաշնամուրի դասատուներ), Ալեքսանդր Հակոբյանը (ընդհանուր դաշնամուրի դասատու, այժմ Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս), Լ. Միրզա-Ավագյանը (ջութակի դասատու) և Ավետիքյանը (թավջութակի դասատու)։

Երաժշտական ստուդիայի բացումը կապված էր չափազանց մեծ դժվարությունների հետ։ Առաջին իմպերիալիստական պատերազմը և դաշնակցականների տխրահռչակ տիրապետությունը Հայաստանը հասցրել էին տնտեսական ու կուլտուրական անկման ծայր աստիճանի։ Այդ ծանր ժամանակաշրջանում շատ դժվար էր կահավորել ստուդիայի շենքը, ձեռք բերել դաշնամուրներ ու ջութակներ, ալտեր, թավջութակներ, կոնտրաբասներ և այլ երաժշտական գործիքներ, ուսման պրոցեսի համար անհրաժեշտ նոտաներ և հաղթահարել չնախատեսված ու աներևակայելի շատ ու շատ խոչընդոտներ։

Չնայած դրան, 1921 թ. դեկտեմբերի 22-ին տեղի ունեցավ երաժշտական ստուդիայի հանդիսավոր բացումը։ Երաժշտական ստուդիան դարձավ ռեսպուբլիկայի առաջին ու միակ երաժշտական օջախն ու կենտրոնը, որն իր վրա վերցրեց թե՛ երաժշտական կրթության և թե՛ երաժշտական լուսավորական աշխատանքների դժվարին և պատասխանատու պարտավորությունը։ Մի կողմից նա պետք է համապատասխան երաժշտական կրթություն ունեցող կադրեր պատրաստեր հետագայում նախատեսվող բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատության՝ կոնսերվատորիայի համար, մյուս կող-